ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԱՐՄԵՆ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Քոչարյան,

ի պատասխան Ձեր 16.09.2024թ. հ. 276-2024թ. գրության՝ տեղեկացվում է.

Պետական հանրակրթական դպրոցներն ունենալով պետական ոչ առևտրային կազմակերպության կազմակերպաիրավական կարգավիճակ, ֆինանսավորվում են պետական բյուջեի միջոցներից, իսկ ֆինանսավորման գործակիցներն ու նորմատիվները հաստատվում են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով: Ներկայումս գործող իրավական ակտի՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի՝ 2022 թվականի դեկտեմբերի 7-ի N79-Ն հրամանի համաձայն՝ հոգեբանի հաստիք նախատեսված է բոլոր դպրոցների համար (հաստիքային միավորը սահմանված է՝ ըստ դասարանների թվի): Ինչ վերաբերում է լոգոպեդի հաստիքին, նույն իրավական ակտով հատուկ մանկավարժի հաստիք նախատեսված է միայն հատուկ դպրոցների համար:

Հարկ է նշել, որ հատուկ մանկավարժի, այդ թվում՝ լոգոպեդի աշխատանքի կարիքի արձանագրման դեպքում՝ համապատասխան մասնագետ է ներգրավվում տվյալ դպրոցին կցված տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ